ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության աջակցության ծրագրեր 2022թ. տարեկան հաշվետվություն

ԵՐԵՎԱՆ 2023

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գյուղատնտեսության ոլորտում Կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունն ուղղված է գյուղատնտեսության ինտենսիվացմանը, արտադրողականության բարձրացմանը, հողային ռեսուրսների նպատակային և ջրային ռեսուրսների խնայողաբար ու արդյունավետ օգտագործմանը, պարենային անվտանգության ապահովման մակարդակի բարձրացմանը, անասնաբուծության և բուսաբուծության զարգացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրված արտադրանքի իրացմանն ու արտահանման խթանմանը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոոպերատիվների, գյուղատնտեսական մթերք վերամշակողների եկամուտների ավելացմանը:

ՀՀ կառավարության ծրագիր

Կառավարության տեսլականն է առաջիկա տասը տարիների ընթացքում ունենալ շրջակա միջավայրի հետ ներդաշնակ ապրող երջանիկ և բարեկեցիկ գյուղական բնակչություն, բարձրորակ և մրցունակ գյուղատնտեսական ապրանք արտադրող փոքր ու միջին տնտեսավարողներ: Որակապես տարբերվող գյուղատնտեսության ստեղծմանը մասնակից ձեռնարկատիրական գործունեություն ծավալող բոլոր սուբյեկտներին Կառավարությունը ընձեռում է միատեսակ պայմաններ, հավասար հնարավորություններ, արդար մրցակցային և կայուն միջավայր:

Գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության առանցքային ճյուղերից մեկն է և հասարակության կեցության հիմքը, որի համախառն արտադրանքի 94%-ն ապահովում են շուրջ 317 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում միջինում 1.48 հա հողատարածք: ՀՀ-ում զբաղվածների 21.8 %-ն ընդգրկված է գյուղատնտեսության ոլորտում: Այն նշանակալի է ոչ միայն որպես ոլորտ, որից ստացվում է որոշակի ավելացված արժեք, այլև առաջին հերթին՝ որպես բնագավառ, որի որակի և զարգացման մակարդակից է կախված բնակչության պարենային անվտանգությունը, գյուղական բնակավայրերի կենսամակարդակն ու զարգացման հնարավորությունները, մարդկանց առողջությունն ու անվտանգությունը, բնակության վայրն ու պայմանները, ինչպես նաև բնակչության կյանքի որակն ու տևողությունը:

2022 թվականի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը շուրջ **1,021.4** մլրդ դրամ է, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է **100.4 %,** այդ թվում՝ բուսաբուծության ծավալը կազմել է շուրջ 518.8 մլրդ դրամ, իսկ անասնաբուծության ծավալը՝ շուրջ 502.5 մլրդ դրամ:

Ներկայումս գյուղատնտեսության ոլորտում իրականացվում են մեկ տասնյակից ավելի պետական աջակցության ծրագրեր, որոնց հիմնական նպատակը գյուղատնտեսությունում կապիտալ ներդրումների ծավալների ավելացումն է, արտադրական հզորությունների ընդլայնումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումն ու գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների կայունացումը: Հատկանշական է, որ 2018-2022 թվականներին գործողության մեջ դրվեցին նոր ծրագրեր, միաժամանակ գործող ծրագրերում իրականացվեցին բազմաթիվ փոփոխություններ, որոնց մեծ մասը նախատեսված էր տնտեսական նոր իրավիճակներում գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ըստ այդմ գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու ու փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունները ճշգրտելու գործողություններ իրականացնելու համար:

2022 թվականին գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ագրարային քաղաքականությունը խարսխված է հետևյալ հիմնական փաստաթղթերի վրա՝

1. ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշում)
2. ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն (ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ որոշում)

2022 թվականին գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ներդրումների ծավալը կազմել է շուրջ **143.5** մլրդ դրամ, որից միայն կապիտալ ներդրումների ծավալը՝ շուրջ **102.5** մլրդ դրամ:

Ստորև առավել մանրամասն ներկայացված են ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգմամբ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԼԻԶԻՆԳԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակը գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացումն է, որը ագրարային ոլորտի մրցունակության և արդյունավետության բարձրացման, արտադրական ներուժի լիարժեք օգտագործման և գյուղատնտեսական արտադրանքի ծավալների աճի հիմնական գործոններից է:

2022 թվականի հունվարի 27-ի N 105-L որոշմամբ հաստատվել է գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության նոր ծրագիրը, որով բարելավվել են լիզինգի տրամադրման պայմանները, մասնավորապես՝ ծրագրի շրջանակում նույն լիզինգառուի կողմից ձեռք բերվող լիզինգի առարկաների ընդհանուր գումարն ավելացվել է մինչև 250 մլն դրամը՝ նախկին 200 մլն դրամի փոխարեն:

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 406 լիզինգային հայտի շրջանակում տրամադրվել է 573 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 192 միավոր տրակտոր, լիզինգի գումարը կազմել է շուրջ 2.8 մլրդ դրամ, սուբսիդավորման գումարը՝ շուրջ 708 մլն դրամ: Ծրագրի շրջանակում լիզինգային հայտերի թիվը, գյուղատնտեսական տեխնիկայի քանակը, լիզինգի գումարը և բաշխվածությունն ըստ տարիների ներկայացված է գծապատկեր 1-ում, 2-ում և 3-ում:



Գծապատկեր 1. Լիզինգային հայտերի թիվը և բաշխվածությունը՝ ըստ ամիսների (աճողական կարգով)

Գծապատկեր 2. 2018-2022թթ. ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի քանակ



Գծապատկեր 3. 2018-2022թթ. ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի քանակ (հատ) և լիզինգի գումար (մլրդ դրամ)

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով նպաստել կապիտալ ներդրումների ծավալների ավելացմանը, արտադրական հզորությունների ընդլայնմանը, տնտեսությունների խոշորացմանն ու զարգացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արտադրողականության բարձրացմանը և արտադրության ծավալների ավելացմանը:

2022 թվականին շարունակվել է ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184 Լ որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրը: Վարկերը տրամադրվել են առավելագույնը 14 տոկոս փաստացի տոկոսադրույքով՝ 3-15 մլն դրամ:

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվել է այնպիսի չափաքանակով, որ վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 0% տոկոսադրույքով, իսկ հանրապետության մնացած համայնքների համար՝ 5%, գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 3 % տոկոսադրույքով:

ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 16-ի N 1424-Լ որոշմամբ 2023 թվականի հունվարի 1-ից ծրագիրն այլևս չի գործում: Ծրագրի մեկնարկից մինչև ավարտը ընդամենը տրամադրվել է 92969 միավոր վարկ՝ շուրջ 241.8 մլրդ դրամ գումարի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 29.3 մլրդ դրամ:

2022 թվականին տրամադրվել է 11838 միավոր վարկ՝ շուրջ 43.2 մլրդ դրամ գումարի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 11.7 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակում 2018-2022 թվականներին տրամադրված վարկերի քանակը, ծավալն ու 2022 թվականին տրամադրված վարկերի գումարի և քանակի բաշխվածությունն ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 4-ում, 5-ում և 6-ում:



Գծապատկեր 4. Տրամադրված վարկերի քանակ, հատ



Գծապատկեր 5. Տրամադրված վարկերի գումար, մլրդ դրամ



Գծապատկեր 6. 2022թ. տրամադրված վարկերի գումարի և քանակի բաշխվածությունն՝ ըստ մարզերի

Ցուցանիշների վերլուծության արդյունքներից պարզ է դառնում, որ ծրագրից առավել շատ օգտվել են Արմավիրի, Արարատի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի մարզերի և Երևանում բնակվող գյուղատնտեսությունում տնտեսավարողները: Կատարված ներդրումների հիմնական ուղղությունները ներկայացված են գծապատկեր 7-ում:



Գծապատկեր 7. Տրամադրված վարկերի բաշխվածությունը՝ ըստ ուղղությունների

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԼԻԶԻՆԳԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակն ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ լիզինգի մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է, որը նախադրյալներ կստեղծի գյուղատնտեսական ծագման մթերքների և դրանց վերամշակված արտադրանքի արտադրության ծավալների ավելացման, միջազգային չափորոշիչներին համապատասխան որակական և անվտանգության պահանջների ապահովման, մրցունակության բարձրացման, արտահանման ծավալների ավելացման, ինչպես նաև ներկրվող արտադրանքը տեղական արտադրությամբ փոխարինելու համար:

2022 թվականին կատարված համապատասխան փոփոխություններով 2022 թվականի ապրիլի 16-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը սուբսիդավորվել է Հայաստանի Հանրապետության դրամով տրամադրված լիզինգի 10, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ 6 տոկոսային կետը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար՝ Հայաստանի Հանրապետության դրամով տրամադրված լիզինգի 12, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ 7 տոկոսային կետը, եթե ձեռք բերվող սարքավորումները շահագործվելու են նույն վայրերում:

Ծրագրով 2022 թվականին հաստատվել է 275 հայտ շուրջ 16.4 մլրդ դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 2.8 մլրդ դրամ: Ծրագրի շրջանակներում ընթացիկ տարում ձեռք է բերվել 710 միավոր սարքավորում: Նախորդ տարվա համեմատ լիզինգի գումարն ավելացել է շուրջ 6 մլրդ դրամով, սուբսիդավորման գումարը՝ 3 անգամ: Ձեռք բերված սարքավորումների քանակն ըստ տարիների, ինչպես նաև տրամադրված լիզինգի քանակի և գումարի բաշխվածությունն ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 8-ում և 9-ում:



	1-ին կիսամյակ	Տարեկան
2019թ.	166	364
2020թ.	104	377
2021թ.	154	776
2022թ.	329	710

Գծապատկեր 8. 2019-2022թթ. ծրագրի շրջանակում լիզինգով ձեռք բերված սարքավորումների քանակը՝ ըստ տարիների



Գծապատկեր 9. 2022թ. ծրագրի շրջանակում տրամադրված լիզինգի քանակը և գումարը՝ ըստ մարզերի

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական հումք մթերող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը:

2022 թվականի ապրիլի 16-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը տրամադրվող վարկերը սուբսիդավորվել են 10 տոկոսային կետով, իսկ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող և նույն վայրերում գյուղատնտեսական հումք մթերող և վերամշակող տնտեսավարողների համար՝ ոչ ավելի, քան 14 տոկոսային կետով: Կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- 2022 թվականի մայիսի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը շահառուներին կարող էր տրամադրվել լրացուցիչ վարկ՝ պտուղբանջարեղենային պահածոների տարայավորման համար անհրաժեշտ ապակե բանկաներ, կափարիչներ, ասեպտիկ պարկեր և դրանց տարաներ ձեռք բերելու համար,
- վերամշակման գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին պտուղբանջարեղենի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել 3.0 մլրդ դրամը և տրամադրվող վարկի չափը հաշվարկվում է գյուղատնտեսական հումքի գնման այն պայմանագրերով, որոնք կնքվել են մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 1-ը՝ հունիսի 1-ի փոխարեն,
- 2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը վերամշակման գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին խաղողի մթերումների (գնումների) նպատակով վարկերը տրամադրվել են մինչև 4 տարի մարման ժամկետով, սուբսիդավորվել են 11 տոկոսային կետով, իսկ վարկերի մայր գումարի մարման համար սահմանված արտոնյալ ժամկետը վարկը տրամադրելու պահից հաշվարկվել է ոչ ավելի, քան 24 ամիս,
- 2022 թվականի հունիսի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը տրամադրվել է մինչև 50%-ի չափով բյուջետային երաշխիք, բայց ոչ ավելի, քան 2021 թվականին արտահանված արտադրանքի արժեքը:

Ծրագրի շրջանակում 2022 թվականին հաստատվել է 255 հայտ՝ շուրջ 23.6 մլրդ դրամի չափով, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 3.7 մլրդ դրամ: Հաստատված հայտերի շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել է բերքի գնման 11368 պայմանագիր, մթերվել է շուրջ 277.2 հազար տոննա պտուղբանջարեղեն և խաղող, որը 2021 թվականի ցուցանիշը գերազանցել է 6.1 հազար տոննայով կամ 2.3%-ով: Ծրագրի շրջանակներում 2022 թվականին ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1168-Լ որոշման հիման վրա 9 շահառուի տրամադրվել է բյուջետային երաշխիք 5.3 մլրդ ՀՀ դրամի չափով:

2022 թվականին կնքված բերքի գնման պայմանագրերի քանակը և տրամադրված վարկերի քանակի և գումարի բաշխվածությունն ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 10 և 11-ում:



Գծապատկեր 10. 2022 թվականին կնքված բերքի գնման պայմանագրերի քանակ



Գծապատկեր 11. 2022թ. ծրագրի շրջանակում տրամադրված վարկերի քանակը և գումարը՝ ըստ մարզերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակը ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային ԽԵԿ-ի մատակարարումն է, ինչը կնպաստի հանրապետությունում աճեցված տոհմային ԽԵԿ-ի ձեռքբերման և դրանց ներկրման մատչելիությանը, տավարաբուծության ճյուղի աստիճանական ինտենսիվացմանը, տավարաբուծական տնտեսություններում տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացմանը, տեղական կենդանիների հետ տրամախաչումների արդյունքում՝ բարձր մթերատու խառնացեղ սերնդի ստացմանը, տավարի մսի և կաթի արտադրության ծավալների ավելացմանը, տոհմային կենդանիների հաշվառման և տոհմային գրքերի վարման համար նախադրյալների ստեղծմանը:

Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումն իրականացվել է այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տրամադրվեն 2% տոկոսադրույքով, ներկրված ԽԵԿ ձեռք բերելու համար՝ 3% տոկոսադրույքով, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սահմանամերձ տնտեսավարողներին կամ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվներին՝ 0% տոկոսադրույքով, մինչև 5 տարի մարման և մինչև 1 տարի արտոնյալ ժամկետներով:

Ծրագրի շրջանակներում 2022 թվականին ձեռք է բերվել 334 գլուխ կենդանի՝ 328.0 մլն դրամ արժեքով, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 143.8 մլն դրամ: Ձեռք բերված կենդանիների գլխաքանակն ըստ տարիների և մարզերի ներկայացված է գծապատկեր 12 և 13-ում:



Գծապատկեր 12. Ձեռք բերված կենդանիների գլխաքանակը՝ ըստ տարիների (2019-2022թթ.)



Գծապատկեր 13. 2019-2022թթ. ձեռք բերված կենդանիների գլխաքանակը՝ ըստ մարզերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԾԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է պետական աջակցության մեխանիզմների, մասնավորապես, մատչելի վարկավորման պայմանների կիրառման և ծախսերի փոխհատուցման միջոցով հանրապետությունում ոչխարաբուծության և այծաբուծության ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, բարձրարժեք տոհմային ոչխարների և այծերի ձեռքբերման (ներկրման) և բարձր մթերատու հոտերի ձևավորման խրախուսումը, բուծվող ցեղերի կատարելագործումը, տոհմային գործի զարգացումը, արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված մաքրացեղ և տրամախաչումների միջոցով ստացված խառնացեղ կենդանիների գլխաքանակի ավելացումը, ինչպես նաև ոչխարաբուծական և այծաբուծական արտադրանքի արտադրության և արտահանման ծավալների ավելացումը:

Ծրագրի շրջանակում նախատեսվել է տոհմային մանր եղջերավոր կենդանիների ձեռքբերման մատչելիության ապահովման նպատակով պետական աջակցությունը իրականացնել 2 եղանակով.

Վարկային բաղադրիչ

Վարկերը տրամադրվել են մինչև 4 տարի մարման և մինչև 1 տարի մայր գումարի արտոնյալ ժամկետներով. ծրագրին մասնակցելու ցանկություն հայտնած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերին տրամադրվել են վարկեր դրամով, առավելագույնը 14 տոկոս անվանական տոկոսադրույքով: Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումն իրականացվել է այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տրամադրվեն շահառուներին 2 տոկոս տոկոսադրույքով, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերին և գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվներին՝ 0 տոկոս տոկոսադրույքով:

Փոխհատուցման բաղադրիչ

Փոխհատուցվել է շահառուի կողմից յուրաքանչյուր կենդանու գլուխը մինչև 450 հազ. դրամ արժեքով ձեռք բերված տոհմային ՄԵԿ-ի համար փաստացի վճարված գումարի (չհաշված տեղափոխման ծախսերը) 23 տոկոսը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվների կողմից մինչև 450 հազ, դրամ արժեքով ձեռք բերված տոհմային ՄԵԿ-ի համար՝ 27 տոկոսը: Փոխհատուցվել է յուրաքանչյուր շահառուի կողմից առավելագույնը 100 գլուխ տոհմային ՄԵԿ-ի, այդ թվում՝ 5 գլխից ոչ ավելի տոհմային արու մատղաշի (ոչխարի և այծի) ձեռքբերման փաստացի ծախսը (չհաշված տեղափոխման ծախսերը), բայց ոչ ավելի, քան 45.0 մլն դրամի 23-27 տոկոսը:

Ծրագրի շրջանակներում 2022 թվականին ձեռք է բերվել 331 գլուխ կենդանի, փոխհատուցման վարկի գումարը կազմել է 76.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակում ձեռք բերված կենդանիների գլխաքանակն ըստ տարիների և մարզերի ներկայացված է գծապատկեր 14 և 15-ում:



Գծապատկեր 14. 2019-2022թթ. ձեռքբերված կենդանիների գլխաքանակը



Գծապատկեր 15. 2019-2022թթ. ձեռքբերված կենդանիների գլխաքանակը՝ ըստ մարզերի

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24–ի N 1485-Լ որոշմամբ հաստատվել է Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակում ապահովագրվում են ծիրանի, խաղողի, դեղձի, խնձորի, հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան/գարնանացան ցորեն, գարի և վարսակ), կարտոֆիլ, սալոր, կեռաս, բալ, ձմերուկ և սեխ մշակաբույսերը:

2022 թվականի գյուղատնտեսական տարվա համար IIF հիմնադրամի հետ, հայկական կողմի համաֆինանսավորմամբ մշակվել է ապահովագրական նոր պրոդուկտ, որը ներառում է երաշտ ռիսկից հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան գարի և ցորեն, գարնանացան գարի, ցորեն և վարսակ) ապահովագրությունը: Ընդլայնվել է նաև ապահովագրվող մշակաբույսերի ցանկը՝ ներառելով կեռասը, բալը: Փոփոխվել է ապահովագրական գումարների սահմանաչափերը՝ նախորդ տարվա առավելագույն, միջին և նվազագույն ապահովագրական սահմանաչափերի փոխարեն սահմանվել է 6 սահմանաչափ:



Գծապատկեր 16. Ծրագրի շրջանակում 2020-2022թթ.-ին գրանցած արդյունքները

Գծապատկեր 16-ում ներկայացված է ծրագրի մեկնարկից մինչև 2022 թվականի գյուղատնտեսական տարվա համար պայմանագրերի կնքման վերջնաժամկետի դրությամբ արդյունքները, համաձայն որոնց 2022 թվականին 2021 թվականի համեմատ ծրագրի շրջանակում կնքված պայմանագրերի քանակը աճել է 19%-ով, իսկ ապահովագրված մակերեսի մասով ցուցանիշը աճել է 10.5%-ով:

Ծրագրի շրջանակում իրականացվում է ապահովագրավճարի առնվազն 50-60 %-ի սուբսիդավորում:

2022 թվականի մայիսի 31-ին ավարտվել է 2022 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրական պայմանագրերի կնքման ժամկետը: Արդյունքում Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալության կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 5091 ապահովագրության պայմանագիր՝ 6444 հա ընդհանուր մակերեսով տարածքի համար, համախառն ապահովագրավճարը կազմել է 866.3 մլն դրամ:



Գծապատկեր 17. 2020-2022թթ.-ի սուբսիդավորման գումարների չափը, մլն դրամ



Գծապատկեր 18. Ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը, հա



Գծապատկեր 19. Ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը՝ ըստ մարզերի, հա

2022 թվականին ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 2167 ապահովագրական հատուցում՝ շուրջ 1.32 մլրդ դրամի չափով:



Գծապատկեր 20. Հատուցումների քանակն ու գումարը՝ ըստ մարզերի



Գծապատկեր 21. Հատուցումների քանակն ու գումարը՝ ըստ ապահովագրվող մշակաբույսերի

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է խթանել արդիական չափորոշիչներով փոքր և միջին ջերմատների կառուցումը, ինչը հնարավորություն կտա բարձրացնել ջերմատնային տնտեսությունների արտադրանքի մրցունակության մակարդակը, կնպաստի գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

Ծրագրով առաջարկվել է ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման 3 մոդել՝ միաշերտ կամ երկշերտ պոլիէթիլենային թաղանթով 300-600 քառ.մ թունելային, պոլիէթիլենային թաղանթով 800-3000 քառ.մ միաթռիչք կամ բազմաթռիչք, պոլիէթիլենային թաղանթով 800-3000 քառ.մ միաթռիչք կամ բազմաթռիչք ջերմատուն՝ մշակության հիդրոպոնիկ եղանակով: Ծրագիրն ավարտվել է 2022 թվականի դեկտեմբերի 31-ին, որի շրջանակում ընդամենը 57 շահառուի հետ կնքվել է պայմանագիր 1.2 մլրդ դրամի չափով և տրամադրվել է 642.8 մլն դրամի չափով փոխհատուցում, որի արդյունքում կառուցվել է 22 ջերմատուն՝ ընդհանուր 4.2 հա տարածքով: 2022 թվականին 20 շահառուի հետ կնքվել է պայմանագիր 414.2 մլն դրամի չափով և տրամադրվել է 358.5 մլն դրամի չափով փոխհատուցում, որի արդյունքում հիմնվել է 12 ջերմատուն՝ ընդհանուր 2.04 հա տարածքով: Ծրագրի շրջանակում կնքված պայմանագրերի բաշխվածությունն ըստ մոդելների, պայմանագրերի և հիմնված ջերմատների քանակը և փոխհատուցված գումարի չափը ներկայացված է գծապատկեր 22, 23-ում:



Գծապատկեր 22. Պայմանագրերի բաշխվածությունը՝ ըստ ջերմատան մոդելների

Գծապատկեր 23. 2022թ. պայմանագրերի և հիմնված ջերմատների քանակը և փոխհատուցված գումարի չափը

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել կենդանիների պահվածքի պայմանները՝ արդյունքում բարձրացնել կենդանիների մթերատվության ցուցանիշները, որի համար առաջադրվել են փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի և դրանց տեխնոլոգիական ապահովման մատչելի տարբերակներ, իրականացվել են անասնաշենքերի կառուցման համար անհրաժեշտ ներդրումների առկայություն և ծախսերի փոխհատուցում, ինչպես նաև ծրագրի իրականացման հնարավոր ռիսկերի գնահատում և դրանց մեղմմանն ուղղված միջոցառումների մշակում: Առաջարկվել է երեք մոդել՝ 130-280ք.մ., 281-450ք.մ., 451ք.մ. և ավելի արտադրական տարածքով:
2022 թվականին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ համատեղ կազմակերպվել է 1 դասընթաց, հավաստագրվել է 5 շահառու, կնքվել է 8 պայմանագիր 108.0 մլն դրամի չափով, շահագործման է հանձնվել 13 անասնաշենք և տրվել է 21 փոխհատուցում՝ 175.7 մլն դրամի չափով: Ծրագրի շրջանակում տրամադրված փոխհատուցումների քանակը, գումարը, բաշխվածությունն ըստ մարզերի և մոդելների, պայմանագրերի և կառուցված անասնաշենքերի քանակը և փոխհատուցված գումարի չափը ներկայացված է գծապատկեր 24, 25, 26, 27-ում:



Գծապատկեր 24. 2019-2022թթ. տրամադրված փոխհատուցումների քանակը և գումարը

Գծապատկեր 25. 2022թ. պայմանագրերի և կառուցված անասնաշենքերի քանակը և փոխհատուցված գումարի չափը



Գծապատկեր 26. 2022թ. կնքված պայմանագրերի բաշխվածությունը՝ ըստ մարզերի



Գծապատկեր 27. 2022թ. շահագործման հանձնված անասնաշենքերի բաշխվածությունն՝ ըստ անասնաշենքերի մոդելների

ՀՀ-ՈՒՄ ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ԱՐԴԻԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող խաղողի, (միայն խաղողի տեխնիկական գինեմետ սորտերով), ինտենսիվ պտղատու այգիների, հատապտղանոցների հիմնման, ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակման, ինչպես նաև ոռոգման արդիական համակարգերի և կարկտապաշտպան ցանցերի ներդրման պետական աջակցության միջոցով՝ խթանել ժամանակակից, բարձր բերքատվությամբ այգիների հիմնումը և այդ եղանակով պտղաբուծության և խաղողագործության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը, ավելացնել մրցունակ խաղողի, պտղի և հատապտղի արտադրության և արտահանման ծավալները, խթանել ոչ ավանդական բարձր արժեք ապահովող մշակաբույսերի արտադրությունը, նվազեցնել կարկտահարության և այլ բնակլիմայական գործոններով պայմանավորված ռիսկերը, նպաստել ջրային ռեսուրսների խնայողաբար և արդյունավետ օգտագործմանը, մեղմել կլիմայի փոփոխության ազդեցությունը և նպաստել հարմարվողականության մակարդակի բարձրացմանը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

Ծրագիրն իրականացվել է ՀՀ ամբողջ տարածքում՝ երկու բաղադրիչով՝ վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման և ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով:

Վարկային բաղադրիչ

2022 թվականին տրամադրվել է շուրջ 45.9 մլրդ դրամ գումարի 95 միավոր վարկ, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 4.1 մլրդ դրամ: Այգեհիմնման նպատակով հաստատվել է **1545** հա-ի, ոռոգման արդիական համակարգերի ներդրման և ջրավազանների կառուցման նպատակով՝ 423 հա-ի, կարկտապաշտպան ցանցերի տեղադրման նպատակով՝ 50 հա-ի և բարձրարժեք մշակաբույսերի մշակության նպատակով՝ 3.2 հա-ի վարկային հայտ:

Փոխհատուցման բաղադրիչ

2022 թվականին կնքվել է փոխհատուցման 230 պայմանագիր, որից՝ այգեհիմնման նպատակով 183 պայմանագիր շուրջ **707** հա-ի համար, տրամադրվել է շուրջ 315.4 մլն դրամ գումարի 11 փոխհատուցում՝ 39 հա հողատարածքում այգեհիմնման համար: Ոռոգման արդիական համակարգերի ներդրման նպատակով կնքվել է 47 պայմանագիր շուրջ 175 հա-ի համար, տրամադրվել է շուրջ 51.9 մլն դրամ գումարի 14 փոխհատուցում՝ շուրջ 41 հա-ի համար:

Ծրագրերի շրջանակներում շահառուների թիվն ու ինտենսիվ այգիների տարածքներն ըստ տարիների, ինչպես նաև 2022 թվականի ինտենսիվ այգիների տարածքներն ըստ մշակաբույսերի, տարածքներն ու գումարն ըստ մարզերի և միայն այգեհիմնման հայտերի տարածքների հայտերն հա-ով ներկայացված են գծապատկերներ 26, 27, 28-ում:

Ինտենսիվ այգեգործության նախորդ ծրագրի շրջանակում փոխհատուցման բաղադրիչով տրամադրվել է շուրջ 1.07 մլրդ դրամի 57 փոխհատուցում՝ **197.8** հա այգեհիմնման նպատակով:



Գծապատկեր 26. 2022թ. ինտենսիվ այգիների հիմման նպատակով հաստատված հայտերը՝ ըստ պտղատեսակների, հա



Գծապատկեր 27. 2022թ. ինտենսիվ այգիների հիմման նպատակով հաստատված հայտերը՝ ըստ մարզերի (վարկային բաղադրիչ)



Գծապատկեր 28. 2022թ. այգեհիմնման տարածքների հայտեր՝ աճողական կարգով, հա (վարկային և փոխհատուցման բաղադրիչ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է նպաստել ԽԵԿ-ի համարակալման և հաշվառման ինստիտուտի կայացմանը, հանրապետության տարածքում կենդանիների տեղաշարժի նկատմամբ վերահսկողության բարելավմանը, անասնաբուժասանիտարական տեսակետից բարձրորակ անասնապահական հումքի և մթերքի արտադրության ապահովման բարելավմանը, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պաշտպանության մակարդակի բարձրացմանը, տավարաբուծության տեղեկատվական հարթակի կատարելագործմանը, կենդանիների կերակրման, պահպանման, անասնահակահամաճարակային միջոցառումների, ինչպես նաև կենդանիների սպանդի, կենդանիների ծագման հումքի և մթերքի վերամշակման, պահեստավորման և իրացման արդյունավետության գնահատմանը, կենդանիների պահման, բուծման և օգտագործման ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման համակարգի կատարելագործմանը, կենդանիների և կենդանական ծագման հումքի և մթերքի միջազգային առևտրի զարգացման համար նմանատիպ միջազգային ստանդարտներով կենդանիների պահպանության և օգտագործման պահանջների ներդաշնակեցմանը, սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացմանը, հետագծելիության ապահովմանը:

Ծրագիրը մեկնարկել է 2022 թվականի նոյեմբերին, որի շրջանակներում բաշխվել է **310000 ականջապիտակ**, իրականացվել է շուրջ **200000** խոշոր եղջերավոր կենդանիների համարակալում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է հանրապետությունում տեղական անասնաբուծական արտադրանքի արտադրության ծավալների ավելացման համար կատարվող ներդրումների մասնակի փոխհատուցման միջոցով նպաստել ճյուղում կատարվող ներդրումների ավելացմանը, անասնաբուծական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը, տեղական արտադրության խթանմանը, ճյուղի գրավչության մակարդակի բարձրացմանը, որը մեկնարկել է 2022 թվականին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում:

Ծրագրի շրջանակում կնքվել է մեկ ներդրումային պայմանագիր՝ «Երեմյան Ֆարմ» փակ բաժնետիրական ընկերության հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է աշխարհաքաղաքական իրադրության, արտաքին սահմանափակումների, շրջանառու միջոցների թանկացման հետևանքների մեղմման, պարենային անվտանգության ապահովման համար 1 հա աշնանացան ցորենի մշակության ծախսերի, մասնավորապես՝ սերմի, պարարտանյութի և դիզելային վառելիքի ձեռքբերման ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով նպաստել աշնանացան ցորենի ցանքատարածությունների ավելացմանը՝ նաև չմշակվող հողերի օգտագործման միջոցով, տեղական արտադրության ցորենի ծավալների և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը, ցորենի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովմանը: Ծրագիրն իրականացվել է 2022 թվականին ՀՀ բոլոր մարզերում, բացառությամբ Արմավիրի և Արարատի մարզերի: Մարզպետարաններից ստացված օպերատիվ տվյալների համաձայն իրականացվել է շուրջ **68000 հա** աշնանացան ցորենի ցանք:

ՀՀ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԱԶՈՏԱԿԱՆ, ՖՈՍՖՈՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԼԻՈՒՄԱԿԱՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակը բուսաբուծության ճյուղում տնտեսավարողների կողմից գործունեություն իրականացնելու համար բավարար պայմանների ապահովումն է, մասնավորապես՝ հողօգտագործողների համար գնաճի աննախադեպ պայմաններում շուկայական գներից ավելի ցածր գներով պարարտանյութերի ձեռքբերման հնարավորության ստեղծումն է, որն իրականացվել է 2022 թվականին Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում:

Ծրագրի շրջանակում 2022 թվականին ՀՀ համայնքներին մատակարարվել է շուրջ **20500 տոննա** պարարտանյութ և տրամադրվել է սուբսիդավորում շուրջ **3.4 մլրդ** դրամի չափով:

Շիրակի մարզ

- 1089 միավոր վարկ՝ 3.8 մլրդ դրամ
- 0.6 հա այգեհիմնման հայտ
- 1 ջերմատուն
- 35 գյուղատնտեսական տեխնիկա
- 389 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 109 մթերման պայմանագիր
- 1255 ապահովագրական պայմանագիր
- 199 ապահովագրական հատուցում

Արագածոտնի մարզ

- 1194 միավոր վարկ՝ 4.3 մլրդ դրամ
- 214.7 հա այգեհիմնման հայտ
- 1 խելացի անասնաշենք
- 2 ջերմատուն
- 49 գյուղատնտեսական տեխնիկա
- 1.7 մլրդ դրամի ագրոպարենային լիզինգ
- 148 մթերման պայմանագիր
- 394 ապահովագրական պայմանագիր
- 273 ապահովագրական հատուցում

Արմավիրի մարզ

- 2376 միավոր վարկ՝ 9.4 մլրդ դրամ
- 1244 հա այգեհիմնման հայտ
- 1 խելացի անասնաշենք
- 1 ջերմատուն
- 131 գյուղատնտեսական տեխնիկա
- 3.0 մլրդ դրամի ագրոպարենային լիզինգ
- 806 մթերման պայմանագիր
- 967 ապահովագրական պայմանագիր
- 470 ապահովագրական հատուցում

Լոռու մարզ

- 631 միավոր վարկ՝ 2.2 մլրդ դրամ
- 49.5 հա այգեհիմնման հայտ
- 1 խելացի անասնաշենք
- 76 գլուխ ԽԵԿ
- 67 գլուխ ՄԵԿ
- 41 գյուղատնտեսական տեխնիկա
- 261.3 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 84 մթերման պայմանագիր
- 1516 ապահովագրական պայմանագիր
- 879 ապահովագրական հատուցում

Կոտայքի մարզ

- 809 միավոր վարկ՝ 3.4 մլրդ դրամ
- 281 հա այգեհիմնման հայտ
- 4 խելացի անասնաշենք
- 3 ջերմատուն
- 30 գլուխ ԽԵԿ
- 227 գլուխ ՄԵԿ
- 31 գյուղատնտեսական տեխնիկա
- 2.5 մլրդ դրամի ագրոպարենային լիզինգ
- 171 մթերման պայմանագիր
- 109 ապահովագրական պայմանագիր
- 19 ապահովագրական հատուցում

Երևան

- 760 միավոր վարկ՝ 1.8 մլրդ դրամ
- 260.8 հա այգեհիմնման հայտ
- 1 ջերմատուն
- 87 գյուղատնտեսական տեխնիկա
- 5.4 մլրդ դրամի ագրոպարենային լիզինգ
- 1167 մթերման պայմանագիր

Արարատի մարզ

- 1920 միավոր վարկ՝ 7.4 մլրդ դրամ
- 239.6 հա այգեհիմնման հայտ
- 3 ջերմատուն
- 99 գլուխ ԽԵԿ
- 77 գյուղատնտեսական տեխնիկա
- 2.6 մլրդ դրամի ագրոպարենային լիզինգ
- 7015 մթերման պայմանագիր
- 490 ապահովագրական պայմանագիր
- 290 ապահովագրական հատուցում

Տավուշի մարզ

- 782 միավոր վարկ՝ 2.7 մլրդ դրամ
- 59 հա այգեհիմնման հայտ
- 66 գլուխ ԽԵԿ
- 42 գյուղատնտեսական տեխնիկա
- 360 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 435 մթերման պայմանագիր
- 66 ապահովագրական պայմանագիր
- 9 ապահովագրական հատուցում

Գեղարքունիքի մարզ

- 1069 միավոր վարկ՝ 3.7 մլրդ դրամ
- 40 հա այգեհիմնման հայտ
- 3 խելացի անասնաշենք
- 1 ջերմատուն
- 42 գյուղատնտեսական տեխնիկա
- 24.4 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 1307 մթերման պայմանագիր
- 241 ապահովագրական պայամանագիր
- 11 ապահովագրական հատուցում

Վայոց ձորի մարզ

- 330 միավոր վարկ՝ 1.1 մլրդ դրամ
- 49.5 հա այգեհիմնման հայտ
- 3 խելացի անասնաշենք
- 63 գլուխ ԽԵԿ
- 18 գյուղատնտեսական տեխնիկա
- 201.2 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 54 մթերման պայմանագիր
- 42 ապահովագրական պայմանագիր
- 16 ապահովագրական հատուցում

Սյունիքի մարզ

- 878 միավոր վարկ՝ 3.1 մլրդ դրամ
- 15.6 հա այգեհիմնման հայտ
- 20 գյուղատնտեսական տեխնիկա
- 6.8 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 72 մթերման պայմանագիր
- 11 ապահովագրական պայմանագիր
- 1 ապահովագրական հատուցում